

**Իվան Վիռիպան
Պատրանքներ**

Կատակերգություն

«Ես կպատմեմ նրա ուղու դեպքերը:
Բայց, թե համարձակ լինեք և հոգով
Կտեսնեք կյանքն այդ պատրանքի ձևով,
Արդ այդ դեպքերը տեսիլքով հառնած
Կկանգնեն ասես ողջ, կենդանացած»

Պյեղ Կողնեյ «Կատակերգական պատրանք»

Գործող անձինք՝

Առաջին կին – 30 տարեկան

Երկրորդ կին – 30 տարեկան

Առաջին տղամարդ – 35 տարեկան.

Երկրորդ տղամարդ – 35 տղամարդ

Բեմ են դուրս գալիս սկզբում մի կինը, ավելի ուշ՝ նաև մյուսը, հետո դուրս է գալիս մի տղամարդը, ավելի ուշ՝ նաև մյուսը: Նրանք դուրս են եկել, միայն, որպեսզի հանդիսատեսին պատմեն երկու ամուսնական զույգի մասին:

Առաջին կին

Բարև ձեզ: Ես ուզում եմ պատմել ձեզ մի ամուսնական զույգի մասին: Հրաշալի մարդիկ էին: Հիսուներկու տարի նրանք միասին էին: Միշտ՝ միասին, հիսուներկու տարի: Լեցուն էր կյանքը նրանց, լիարժեք: Գեղեցիկ էր նրանց սերը: Կնոջ անունը Սանդրա էր, ամուսնունը՝ Դենի: Երբ Դենին դարձավ ութսուներկու տարեկան, նա ծանր հիվանդացավ և ընկավ անկողին: Եվ մի օր նա զգաց, որ մահանում է: Նա կանչեց կնոջը՝ Սանդրային: Սանդրան նստեց մահճակալի մոտ: Դենին բռնեց նրա ձեռքը

և սկսեց խոսել: Դենին հասցրեց ասել Սանդրային ամենն, ինչ ուզում էր, ամենն, ինչ պետք էր: Նա ասաց.

-Սանդրա, ես շնորհակալ եմ, շնորհակալ եմ քեզ:

Դադար:

Ես երախտապարտ եմ քեզ մեր ապրած տարիների համար: Քո շնորհիվ ես ապրեցի հրաշալի, զարմանալի ու լեցուն կյանք: Միայն քո շնորհիվ:

Սանդրան ուզում էր առարկել, բայց Դենին խնդրեց նրան լռել: Դենին շարունակում էր խոսել ու ասել այն ամենն ինչ կարևոր էր իր համար: Սանդրան լուռ նստել էր Դենիի մոտ, Սանդրան հասկանում էր, որ Դենին մահանում է: Սանդրան նայում էր ամուսնուն, ուզում էր հասցնել տեսնել նրան վերջին անգամ: Ուզում էր մտապահել ապրող Դենիին:

Դադար:

Ես շնորհակալ եմ քեզ, Սանդրա, որ ինձ սովորեցրիր թե ի՞նչ է սերը: Թե ի՞նչ է սերը, թե ինչ ուժ է սերը ես հասկացա քո շնորհիվ: Հասկացա, որ սերը խոսքեր չէ, սերը ռոմանտիկա չէ, սերը աշխատանք է, մեծ աշխատանք ու պատասխանատվություն վերցնելու ունակություն: Սանդրա, քո շնորհիվ ես հասկացա՝ ինչ է պատասխանատվությունը: Չէ՞ որ ամենակարևորը պատասխանատվություն կրելն է: Եվ շնորհակալ լինելն է: Լինել շնորհակալ և պատասխանատու՝ ահա կյանքի ողջ բանաձևը: Պատասխանատվություն և շնորհակալություն: Երախտապարտ եմ քեզ, քո սիրն ինձ սովորեցրեց, որ կյանքը ուշադրություն և հոգատարություն է: Քեզ սիրելով ես սովորեցի լինել ուշադիր, ես սովորեցի տեսնել կողքիս մարդուն: Սերը սովորեցնում է տեսնել ուրիշին, ոչ միայն ինքդ քեզ:

Ես սիրել եմ քեզ և հասկացել, որ ես պետք է արժանի լինեմ այդ սիրուն, արժանի լինեմ քեզ: Եվ ես փոխվում էի: Ես պետք է փոխվեի: Շնորհ ու հրաշք է, երբ ինչ-որ բան ստիպում է քեզ փոխվել: Երբ ջանում և փոխում

ես ինքդ քեզ: Եկել ես այս աշխարհ և եթե գնում ես փոխված, ուրեմն իսկապես ապրել ես: Ապրել ես իսկական: Եսասիրության փոսից մեզ միայն սերը կարող է դուրս քաշել: Մերը ստիպեց ինձ հայացքս վեր բարձրացնել, տեսնել ինձ կողքից, ստիպեց հաղթահարել իմ ծուլությունը, իմ փոքրոգությունը, իմ վախը: Իմ բոլոր ձեռքբերումները քո շնորհիվ էին, Սանդրա: Ես տեսնում էի, որ ինձ սիրում է քեզ նման մի կին, և ես ուզում էի լինել այն տղամարդը, որն արժանի է քո սիրուն, և իմ արարքները քո հանդեպ ունեցած սիրո շնորհիվ էին: Եվ այն ամենն ինչ արել եմ ուրիշ մարդկանց ու աշխարհի համար, ամենն արել եմ քո հանդեպ ունեցած սիրո ուժով: Եվ քո հանդեպ ունեցած սերը դարձավ ավելի լայն քան ուղղակի սեր դեպի կինը: Նա հանկարծ դուրս եկավ իր սահմաններից և տարածվեց մնացյալ ամբողջ աշխարհի վրա: Քեզ սիրելով ես սովորեցի սիրել ուրիշներին: Սանդրա, այն սերը, որ նվիրում էիր ինձ, այս տարիների, այս հիսուններկու տարիների ընթացքում, իմաստով է լցրել ոչ միայն իմ կյանքը, այլ նաև այն մարդկանց, ովքեր մեր կողքին էին: Մեր երեխաների, մեր ընկերների: Ես տեսնում էի, թե ինչպես էին իմ ընկերները նայում մեզ, ինչպես էին ուզում լինել մեզ նման, սիրել մեզ պես: Եվ շատերն այդ պատճառով փոխեցին իրենց կյանքը: Քո սերը, Սանդրա, հզոր լուսարձակի պես լուսավորում է ամեն բան, այն ամենն ինչ հաղորդակցվում է քո սիրո հետ դառնում է այլ, փոխակերպվում է, ամեն բան ծաղկում է:

Շնորհակալ եմ, Սանդրա, քո սկզբունքայնության, հաստատակամության համար, շնորհակալ եմ իմ հասցեին ասած բոլոր դաժան բառերիդ համար, շնորհակալ եմ, որ բոլոր տհաճ բաներն ասել ես դեմքիս: Ես նեղանում էի քեզնից, որովհետև լսում էի խոսքեր, որ ինձ դուր չէին գալիս: Բայց հատկապես սրա համար եմ շնորհակալ քեզ: Երբեմն զայրանում էի քեզ վրա. քո խոսքերն այնքան ցավեցնող էին, բայց դու ինձ ճշմարտությունն էիր ասում, և հենց սա է ինձ փրկել գոռոգությունից ու եսասիրությունից, որի մեջ այդքան հաճախ ընկնում են մարդիկ: Դու ազնիվ ես եղել և ասել ես այն ամեն, ինչ զգացել ես սրտով: Շնորհիվ դրա

ես կարողացել եմ խուսանավել շատ-շատ ցավերից: Մանդրա, չէ որ ամբողջ կյանքում դու ինձ փրկել ես անախորժություններից: Դու եղել ես իմ իսկական ուսուցիչը: Շնորհակալ եմ այն կյանքի համար, որ պարզել ես ինձ: Շնորհակալ եմ մեր հրաշալի երեխաների համար, որոնց դու մեծացրել ես: Քո շնորհիվ են նրանք զգայուն ու բարի: Եվ գլխավորը, Մանդրա, գլխավորը, ինչի համար երախտապարտ եմ քեզ. դու ինձ պատմեցիր սիրո մասին, դու ինձ սովորեցրիր, թե ինչպես է պետք սիրել: Բացատրեցիր, թե այդ ինչ է սերը:

Մեր առաջին իսկ հանդիպմանը դու ասացիր, հիշում ես, դու ասացիր, որ իսկական սերը միայն փոխադարձ է լինում, որ սերն իսկական է, երբ երկուսն են սիրում, իսկ երբ միայն մեկն է սիրում, դա արդեն սեր չէ: Այդ բառերը ես հիշեցի ընդմիշտ: Եվ հետո, ամեն անգամ ես հասկանում էի, որ սիրո մեջ երկուսն են, ինչն էլ նշանակում է՝ ես պատասխանատու եմ քո սիրո համար: Սա ինձ օգնել է խուսափել բազմաթիվ գայթակղություններից: Ինձ օգնել է չդավաճանել քեզ: Գաղտնիք չէ, որ տղամարդիկ նայում են ուրիշ կանանց, և ես բացառություն չեմ: Եվ երբ քեզ դավաճանելու եզրին էի լինում, ես հանկարծ հիշում էի քո բառերը, որ սերը լինում է միայն փոխադարձ և հասկանում էի, որ իմ արարքը դավաճանություն կլինի ոչ միայն իմ, այլ նաև քո սիրո հանդեպ: Ես պայքարում էի, և փրկվում էի, քեզ դավաճանելուց: Ես երջանիկ եմ, որ միասին ապրելով հիսուններկու տարի, երբեք չենք դավաճանել միմյանց, և միմյանցից թաքցնելու ոչինչ չունենք: Շնորհակալ եմ, որ մեռնում եմ այսպիսի գեղեցիկ մահով: Շնորհակալ եմ, որ կարող եմ այսպես մահանալ: Երջանկություն է այս հնարավորությունը, որ կյանքիս ավարտին կարող եմ ասել այս խոսքերը: Հենց սա է լիարժեք ապրած կյանքը՝ սիրով, արարչագործությամբ և այս աշխարհից արժանապատիվ հեռացումով: Շնորհակալ եմ, սիրելիս, այս ամենի համար՝ իմ ամբողջ կյանքի և իմ գեղեցիկ մահվան համար:

Սանդրա, ներիր, որ առաջինն եմ մեռնում, որ ոչ ոք չի լինի որ դու ասես այս խոսքերը: Սանդրա, առաջինը մեռնելը էգոիզմ է իմ կողմից, բայց ավաղ, ես ոչինչ չեմ կարող անել, բնությունը մեր ցանկություններից զորեղ է: Ես կցանկանայի լինել կողքիդ քո մահավան պահին, կցանկանայի հենց այսպես նստել կողքիդ և նայել քեզ: Գիտեմ, որ շատ ծանր է: Գիտեմ, ավելի հեշտ է մեռնել, քան տեսնել սիրելիիդ մահը: Ներիր, որ առաջինն եմ մեռնում: Երբ մոտենա քո վերջին ժամը, Սանդրա, հիշիր հրաժեշտիս խոսքերն այս, և իմացիր, ես քեզ հետ եմ լինելու, իմ սերը քեզ հետ է լինելու: Ես չեմ հավատում, որ մահից հետո կյանք կա: Ես գիտեմ, որ իմ ուղին այսօր ավարտվում է և չի լինի շարունակություն: Բայց ես հավատում եմ և գիտեմ, Սանդրա, որ սերը չի մահանում, այն ապրում է հավերժ, անգամ մեր մահից հետո մեր սերը կշարունակի ապրել: Ես չեմ կարող բացատրել դա գիտականորեն, բայց ես զգում եմ, որ այդպես է: Միստիկ բաների չեմ հավատում, ես խոսում եմ պարզ, շատ պարզ բաների մասին: Սերը շատ պարզ բան է, հասանելի եզակիներին: Ես ապրեցի այս կյանքը, որ հասկանամ՝ կա սեր: Սերը հզոր ուժ է: Սերը հաղթում է մահը: Ես մահից չեմ վախենում: Ես սիրում եմ քեզ:

Եվ նա մահանում է: Եվ դադար:

Եվ Սանդրան նստած ամուսնու կողքին նայում է նրան:

Եվ Դենին չկա այլևս:

Եվ Սանդրան վեր է կենում և դուրս գալիս սենյակից: Եվ դադար:

Դադար:

Ամուսնու մահից հետո Սանդրան ապրեց ընդամենը մեկ տարի, հետո հիվանդացավ, անկողին ընկավ և օրերից մի օր նա նույնպես զգաց, որ մահանում է: Եվ այդ ժամանակ նա խնդրեց իր մոտ գալ ամուսնու ընկերոջը: Ալբերտին: Ալբերտն ու Դենին ամենամոտ ընկերներ էին դեռ դպրոցական տարիներից: Ամբողջ կյանքում անբաժան էին: Ալբերտը

Դենիի ու Սանդրայի հարսանիքի վկան էր: Եվ երբ Ալբերտը ներս մտավ, Սանդրան զգաց, առավել քան երբևէ այս տարվա ընթացքում, որ Դենին այլևս չկա:

Սանդրան ասաց.

-Նստիր Ալբերտ, նախքան մեռնելու քեզ բան ունեմ ասելու: Այսօր ես մեռնելու եմ, ես գիտեմ, և փառք Աստծո:

Ալբերտն ուզում էր առարկել, բայց Սանդրան խնդրեց նրան լռի: Սանդրայի համար կարևոր էր նրան ասել այս ամենը:

-Ալբերտ, մենք ծանոթ ենք առավել քան հիսուն տարի, չէ՞: Դու ամուսնուս ընկերն ես: Մեր հարսանիքի վկան ես: Եվ գիտես, ուզում եմ ասել, որ դու հայտնվեցիր իմ կյանքում, այն օրը, երբ ես ու Դենին ծանոթացանք: Ես եկել էի Դենիի հետ հանդիպման և այնտեղ դու էիր: Եվ այդ պահից մինչև այսօր, այս հիսուններեք տարի և չորս ամիսների ընթացքում, այս ամբողջ ընթացքում ես սիրել եմ միայն քեզ, Ալբերտ: Այնտեղ, Դենիի կողքին քեզ տեսնելուն պես ես հասկացա, որ ահա այն մարդը, որ կսիրեմ միշտ: Բայց դու ամուսնացած էիր, ես տեսնում էի, որ սիրում ես կնոջդ: Եվ ես ամուսնացա Դենիի հետ, և մենք ապրեցինք միասին հիսուններկու տարի, և դու միշտ մեր կողքին էիր, և ես միշտ, ամեն վարկյան սիրել եմ քեզ, և միայն հիմա, երբ մեռնում եմ, ուզում եմ քեզ ասել այդ մասին: Բայց սա ամենը չէ, Ալբերտ:

Դադար:

Ուզում եմ երախտագիտությունս հայտնել քեզ այն երջանկության համար, որ զգացել եմ, ունենալով քեզ սիրելու բացառիկ հնարավորությունը: Շնորհիվ այդ սիրո, ես հասկացա՝ ինչ է նշանակում, ոչինչ չցանկանալ ինքդ քեզ համար, այլ միայն տալ: Քո հանդեպ սերը սովորեցրեց ինձ, որ ավելի կարևոր է տալը, քան պահանջելը: Ես հասկացա, որ սիրել նշանակում է տալ, որ իսկական սերը ոչինչ չի

պահանջում, ոչինչ չի ակնկալելում: Բոլոր այս տարիներին, հիսունից ավելի, ես նայում էի քեզ և սիրոսւ լցվում էր այնպիսի լուսավոր, հրաշալի զգացմունքով: Իհարկե, ես տանջվում էի քո կողքին լինելու անհնարությունից: Ես ուզում էի քեզ հետ լինել, մերձենալ քեզ, ես երագում էի այդ մասին, երագում էի գրեթե միշտ, Ալբերտ: Բայց և քո մասին երագելով՝ ես քեզ հետ էի, քո հանդեպ սիրո մեջ էի: Եվ քո հանդեպ իմ սերը տարածվում էր մյուս մարդկանց վրա, բոլորի վրա, ընդգրկելով ամուսնուս՝ Դենիին: Ես նրան երբեք չեմ խաբել, որովհետև ինձանում սեր էր և այդ սիրո մի մասը ես նվիրում էի նրան: Ես նրան էի նվիրում քո հանդեպ տածած իմ սիրո մի մասը: Նրա հանդեպ միշտ ազնիվ եմ եղել, որովհետև սիրել եմ, ճիշտ է, ոչ նրան, բայց իմ մեջ սեր էր, նա ընդունում էր այդ սերը, երջանիկ էր: Երբ երիտասարդ էի, շատ էի տանջվում, կարծում էի, իսկական սերը միայն փոխադարձ է, հետո հասկացա՝ սերը չունի ոչ մի կանոն և ձևակերպում: Ես հասկացա, որ սերը պարզապես սեր է, և այն կարող է լինել ինչպիսին ասես և ում հանդեպ ասես: Սերն այնպիսի ուժ է, որ դուրս է գալիս բոլոր ավերից հաղթահարելով ցանկացած արգելք ու խոչընդոտ:

Ես սիրել եմ քեզ փոխադարձության որևէ հույս չունենալով և դրանից սերս ավելի էր ուժեղանում: Եվ ես ինքս էի ուժեղանում, և ես դառնում էի ավելի անվախ, ավելի համարձակ, և ես դարձա համարձակ: Սերը, որը չունի փոխադարձության որևէ հույս, սովորեցրեց ինձ պատասխանատու լինել զգացմունքիս հանդեպ, սովորեցրեց ուշադիր լինել սրտիս հանդեպ: Ես հասկացա, որ սեր գտնելը դժվար է, կորցնելը՝ հեշտ: Ու ես պահում ու փայփայում էի սերս: Շնորհակալ եմ, որ երբեք ինձ առիթ չես տվել քեզ մոտենալու, շնորհակալ եմ, որ քեզ համար երբևէ չեմ եղել կին, այլ միշտ եղել եմ ընկերոջդ կինը: Չգիտեմ, կկարողանայի զսպել ինձ, եթե առիթ լիներ քեզ հետ մտերմության: Բայց ես իսկապես հարգում և գնահատում եմ քո չքնաղ կնոջը՝ Մարգրեթին: Նա զարմանալի նուրբ անձնավորություն է, և դու սիրում ես նրան, և դա հրաշալի է: Եվ ես ուրախ եմ, որ իմ սիրած տղամարդը սիրել գիտե: Դու սիրել գիտես, և դա

հրաշալի է, Ալբերտ: Ես երջանկություն եմ ցանկանում քեզ ու Մարգրեթին, ցանկանում եմ, որ դուք էլի ապրեք միասին: Շնորհակալ եմ քեզ, որ հանդիպեցիր կյանքիս ճանապարհին, շնորհակալ եմ, որ դու գոյություն ունես և կաս ու պարզեցիր ինձ սիրով լեցուն կյանք, օգնեցիր ինձ հասկանալ՝ սերն այն է, երբ ամեն ինչ տալիս ես, փոխարենը պահանջելով ոչինչ: Շնորհակալ եմ, որ եկար, լսեցիր ինձ, հնարավորություն տվեցիր այսպես գեղեցիկ ու բնականորեն, այսպես հիմնավորապես հեռանալ կյանքից: Ուրախալի է այսկերպ մեռնելը: Բախտն ինձ ժպտաց, որ Դենին առաջինը հեռացավ այս կյանքից և ես կարողացա ճանապարհել նրան: Նա շատ գեղեցիկ մեռավ: Հիմա ես նույնպես մեռնում այն զգացողությամբ, որ կյանքս իզուր չի անցել: Ես չեմ վախենում մեռնել, ես ապրեցի այս կյանքը, որ հասկանամ՝ կա սեր, սերը հզոր ուժ է, սերը հաղթում է մահը: Ես սիրում եմ քեզ:

Հետո նա ասաց. «Ոչինչ պետք չէ ասել, Ալբերտ: Խնդրում եմ, ինձ ոչինչ մի պատասխանիր: Հիմա պարզապես գնա: Մնաս բարով: Մենք էլ երբեք չենք տեսնվի: Ողջույնս Մարգրեթին: Երջանիկ եղեք: Մնացեք բարով»:

Այսպիսի պատմություն:

Դադար:

Եկրորդ կին

Իսկ հիմա ես ուզում եմ պատմել ձեզ մի ուրիշ ամուսնական գույգի մասին: Նրանք նույնպես միասին ապրեցին ավելի քան հիսուն տարի: Ամուսնու անունը Ալբերտ էր, կնոջ անունը՝ Մարգրեթ: Նրանք հասակակիցներ էին. արդեն ութսունչորս տարեկան: Եվ ահա, մի անգամ Ալբերտը ինչ-որ զբոսանքից տուն եկավ, նստեց աթոռին, սենյակի կենտրոնում, կանչեց կնոջը, որ նա էլ նստի իր դիմաց՝ հյուսկեն բազկաթոռին, և երբ կինը եկավ ու նստեց նրա դիմաց՝ հյուսկեն բազկաթոռին, Ալբերտն ասաց. «Մարգրեթ, ես ուզում եմ խոսել քեզ հետ: Դա շատ կարևոր է: Չէ որ վաղուց կարևոր բաների մասին չենք խոսել:

-Կարծում եմ երբեք էլ կարևոր բաների մասին չենք խոսել,-
պատասխանեց Մարգրեթը: Նա հումորով կին էր:

-Անշուշտ ծիծաղելի է, -ասաց Ալբերտը և շարունակեց,-Մարգրեթ, ուզում
եմ ասել քեզ, այնպես է պատահել... ես սիրեցի ուրիշ կնոջ: Դժվար է այս
մասին քեզ ասել, բայց մենք հիսունչորս տարի է միասին ենք, և ես երբեք
լրջորեն քեզ չեմ ստել: Քեզ շատ եմ հարգում, դու իմ երեխաների մայրն
ես...

-Եվ թոռներիդ տատիկը,-ավելացրեց Մարգրեթը:
Նա հումորով կին էր:

-Այո, այո, անշուշտ ծիծաղելի է,-արձագանքեց Ալբերտը և շարունակեց,-
և ահա, ստիպված եմ մի տհաճ ճշմարտություն ասել քեզ: Մարգրեթ, ես
վերջապես հասկացա՝ ինչ է սերը, իսկական սերը, այն որ նկարագրված է
գրականության մեջ, այն սերը, որի մասին բոլորն են երագում, երբ
երիտասարդ են, ու ոչ ոք չի գտնում այն: Ի վերջո համաձայնում ու
բավարարվում ենք նրանով ով անմիջապես կողքիդ է, քթիդ տակ: Մենք
չենք գտնում իսկական սերը և որոշում ենք, թե այն ամեննին գոյություն
չունի, պոետների հորինածն է, և այդ ժամանակ ամուսնանում ենք նրա
հետ ով կողքիդ է, իրական է, ձեռքիդ տակ է: Հետո ապրում ենք այդ կնոջ,
կամ այդ տղամարդու հետ ողջ կյանքում, կարծելով, թե հենց սա է, ինչին
ընդունակ է մարդկությունը, թե հենց սա է ողջ սերը, թե հենց այսպիսին է
այն լինում, բայց, իրականում, սերը բոլորովին այլ է, այդպիսին չէ: Այն
ինչ որ ուրիշ բան է: Սեր կա, Մարգրեթ: Պարզապես մեզ չի տրվել զգալ
այն, և մենք միասին, կողք-կողքի ապրել ենք հիսունչորս տարի,
կարծելով, թե այն ինչ զգում ենք միմյանց հանդեպ՝ սեր է, բայց դա սեր
չէր, ուրիշ զբազմունք էր: Սերը միանգամայն այլ է, այն ուրիշ հոտ ունի,
ուրիշ էլևեջներ, ուրիշ համ, ուրիշ գույն, ես դա այսօր հասկացա
Մարգրեթ: Այսօր, երբ արդեն ութսունչորս տարեկան եմ, բայց ես
երջանիկ եմ... Թեկուզ այսքան ուշ, բայց սերն ինձ գտավ: Երջանիկ եմ,
չնայած անկեղծորեն ցավում եմ քեզ համար, Մարգրեթ: Չեմ ուզում
անշնորհակալ երևալ, դու ինձ քո լավագույն տարիներն ես նվիրել, ի՞նչ
եմ ասում, կյանքդ ես նվիրել, ես դա շատ եմ գնահատում, անսահման
շնորհակալ եմ քեզ, դու ամենահարազատ մարդն ես իմ կյանքում, միշտ

եղել ես ու կլինես, բայց ես երբեք քեզ չեմ սիրել, Մարգրեթ, և դու էլ ինձ երբեք չես սիրել: Դա էլ այսօր հասկացա: Հավատա, մենք միմյանց չենք սիրել այն սիրով, որի մասին երիտասարդ տարիքում բոլորն են երազում ու գրեթե ոչ մեկին չի շնորհվում: Իսկ ինձ, ահա, շնորհվեց: Ես երջանիկ եմ, Մարգրեթ: Կյանքումս առաջին անգամ ես սիրում եմ: Բայց սիրում եմ ուրիշ կնոջ, ներիք:

Այս ամենն ասելուց հետո Ալբերտը լռեց:
Ստեղծվեց ծանր դադար: Ոչ այնքան երկար: Հետո Մարգրեթն ասաց.

- Դու տոան ծերուկ ես, Ալբերտ:
Սկզբում նա ասաց միայն այսքանը:

Առաջին տղամարդ

- Որովհետև նա հումորով կին էր:

Եկրորդ կին

- Այո, նա հումորով կին էր:

Առաջին տղամարդ

- Եվ դեռ այն դեպքում, որ քաղցկեղ ուներ:

Վաթսուն տարեկանում նրա կրծքում քաղցկեղ հայտնաբերեցին, վիրահատեցին, հեռացրեցին մի կուրծքը և նա ... Կատակ էր: Ոչ մի քաղցկեղ էլ չկար, և նրա կուրծքն էլ իր տեղում էր: Նա, կարելի է ասել, երբեք չի հիվանդացել: Նա շատ առողջ և հումորով կին էր:

Եկրորդ կին

- Եվ ահա, երբ Ալբերտը սիրո մասին իր մենախոսությունն էր արտասանում, Մարգրեթը լսում և միաժամանակ մտածում էր մոտավորապես այսպես. «Աստված իմ, նա պարզապես տոան ծերուկ է, ինչ իմաստ ունի պատասխանել, հիմար-հիմար շաղակրատում է: Պարզապես ուզում է զայրացնել ինձ և վերջ: Ինչո՞ւ արձագանքեմ սիրո մասին այդ գառանցանքին:

Երկուսս էլ մի ուտքով գերեզմանում ենք, անիմաստ են պարզաբանումներն ու կեղտոտ սպիտակեղենը երևան հանելը. հիմա արդեն շատ ուշ է: Ավելի լավ է լռեմ և առիթ չտամ այդ հիմար ծերուկին, իրեն երիտասարդ սիրեկան զգալու».- այսպես էր մտածում Մարգրեթը: Բայց իրականում այնպես ստացվեց, որ չգիտես ինչու, Ալբերտի պաթոսով լի ճառը սիրո մասին, չգիտես ինչու, խոցեց Մարգրեթին: Եվ չնայած այն բանին, որ նա շատ խելացի և հումորով կին էր, այդ պահին խելքն ու հումորը նրան լքեցին, չգիտես ինչու, ու չնայած նա որոշեց չպատասխանել այդ հիմար ծերուկին, բայց հենց նույն պահին, երբ որոշեց չպատասխանել, վերցրեց ու պատասխանեց:

- Միայն ուզում եմ ասել, Ալբերտ, որ պետք չէ ուրիշներին քեզանով չափել: Եվ եթե քեզ բախտ չի վիճակվել հասկանալ՝ ինչ է սերը, ներիր, դեռ չի նշանակում, թե ուրիշներն էլ չեն հասկացել ու չեն սիրել:
- Ուրիշներ ասելով, քե՞զ ի նկատի ունես, - հարցրեց Ալբերտը:
- Այո, ինձ ի նկատի ունեմ,- պատասխանեց Մարգրեթը:
- Ուրեմն ուզում ես ասել, թե քեզ բախտ է վիճակվել զգալ՝ ինչ է իսկական սերը:
- Այո, ճիշտ այդպես:

Ալբերտը մոտեցավ նրան, ծնկի իջավ նրա առաջ, ձեռքերով ծածկեց դեմքը, քարացավ այդպես մի քանի րոպե, հետո բացեց դեմքը, նայեց Մարգրեթին և ասաց.

-Ցավում եմ Մարգրեթ.... քեզ ընդամենը թվում է, թե դու ինձ սիրում ես: Ավելի ճիշտ, իհարկե, դու ինձ սիրում ես, ինչպես և ես եմ քեզ սիրում, Մարգրեթ, ներիր, բայց ես ուրիշ սիրո մասին եմ խոսում, այն սիրո մասին, որ մեզ չճանաչելից զգալ:

- Բայց ինչու ես շարունակում խոսել ուրիշների փոխարեն: Քեզ չչնորհվեց, իսկ ուրիշներին գուցե շնորհվեց:
- Ոչ, Մարգրեթ, «ուրիշներին», ասել է թե՛ քեզ, նույնպես չի հաջողվել, որովհետև իսկական սերը միայն փոխադարձ է լինում: Եվ ես դա բառացիորեն այսօր հասկացա: Սերը լինում է միայն փոխադարձ, իսկ երբ մեկը սիրում է մյուսին, բայց այդ մյուսը ոչ, դա սեր չէ: Իրականում այդ մեկն էլ չի սիրում, այլ կարծում է, թե սիրում է: Ես այդ բանն այսօր հասկացա, իմ անձնական փորձից: Ես չէի ուզում մանրամասներ պատմել, բայց քանի որ բանը դրան հասավ՝ կպատմեմ: Եվ, կրկին խնդրում եմ ներիք, որ քեզ ցավ եմ պատճառում:

-Ներում եմ, ներում եմ - ասաց Մարգրեթը,- նա հումորով կին էր:

-Ծիծաղելի է,- ասաց Ալբերտը և շարունակեց,- ես այսօր Սանդրայի մոտ էի: Նա շատ վատ էր, կարծես թե մահանում է: Մի խոսքով, ես գնացել էի նրա մոտ, և նա խոստովանեց, որ ամբողջ կյանքում, այս տարիների ընթացքում, միայն ինձ է սիրել: Հասկանում ես, ոչ թե Դենիին, այլ ինձ: Նա ճշմարտությունն էր ասում. Մահից առաջ մարդիկ չեն ստում: Ասելու ձևից էլ հասկացա, որ չի ստում: Ամբողջ կյանքում նա միայն ինձ է սիրել, բայց չի համարձակվել խոստովանել, չի համարձակվել դավաճանել Դենիին, չի համարձակվել կոտրել նրա կյանքը: Եվ նա ասաց, որ նախկինում կարծել է, թե իսկական սերը միայն փոխադարձ է լինում, հետո, երբ սկսել է սիրել ինձ՝ հասկացել է, որ այդպես չէ, չէ որ նա ինձ սիրել է առանց փոխադարձության: Եվ երբ նա այս ամենն ասում էր, ես լսում էի, և աչքերիս առաջ իմ ամբողջ կյանքն էր անցնում կապված Սանդրայի և Դենիի հետ: Հիշեցի Սանդրային, երբ նա երիտասարդ էր, հիշեցի, ինչպես էինք ես ու դու ամեն շաբաթ օր նրանց հյուր գնում, հիշեցի մեր ընդհանուր տոնները, հիշեցի, ինչպես էինք միասին ծովափ գնում: Հիշեցի, թե ինչ գեղեցկուհի էր Սանդրան, ինչ քայլվացք ուներ, ինչ գեղեցիկ ձեռքեր, կոնքեր, հիշեցի նրա բնավորությունը, համեստությունը, նրա խելքը: Հիշեցի, ինչպես նա մի անգամ լաց եղավ, երբ Դենին բանջարեղենի հետ խխունջ

խորովեց: Հիշում ես դա քո ծննդյան օրն էր: Չգիտես ինչու, ես հանկարծ հիշեցի այդ ամենը: Երբ այսօր լսում էի Սանդրային, ես հիշեցի, որ նա միշտ էլ ինձ դուր էր գալիս, դուր էր գալիս, բայց ոչ ավելին: Եվ հանկարծ այդ միտքը համակեց ինձ «դուր էր գալիս, ոչ ավելին»: Եվ, հանկարծ, ես հասկացա, հենց այդ պահին, հանկարծ հասկացա, որ ահա կանգնած եմ մի ծեր կնոջ առջև, որ պառկած է անկողնում, կանգնած եմ, և հանկարծ զգում եմ, սիրում եմ նրան, հասկանում եմ ես, Մարգրեթ, ասեմ ավելին, ես հանկարծ հասկանում եմ, որ միշտ սիրել եմ նրան, բայց այնքան խորն էր այդ սերը, որ անհնար էր տեսնել այն: Հասկանում եմ, դժվարանում եմ բացատրել քեզ: Հիմա չէ, որ այդ սերը ունեցա: Այն, պարզվում է միշտ ինձ հետ էր: Պարզապես ես այն չէի տեսնում, թույլ չէի տալիս, որ բացահայտվի, ուղեղս այլ բաների մեջ էր ներքաշված: Հասկանում եմ, Մարգրեթ, ես հասկացա, որ դա նորություն չէր, պարզապես ես հանկարծ հասկացա, որ միշտ սիրել եմ միայն Սանդրային, և դա իսկական սեր է եղել, որովհետև այն փոխադարձ է եղել, որովհետև մենք ստեղծված ենք եղել միմյանց համար, ու, չգիտես ինչու ես դա չէի հասկանում, ինչ-որ տարօրինակ անգիտության մեջ էի: Չգիտեմ, ինչու այսպես եղավ. երևի ամեն ինչ իր ժամանակն ունի: Հասունացած պտուղն ինքն է ընկնում ճյուղից: Ճակատագրի դաժան խաղ է, թե՛ հանգամանքների զուգադիպում... չգիտեմ: Կարևորը, որ ուզում եմ ասել քեզ՝ սերը այսօր չայցելեց ինձ, այն ինձ հետ էր միշտ: Պարզապես այն արթնացավ այսօր: Փաստորեն Սանդրան սխալվում էր, կարծելով, թե սերը կարող է լինել ոչ փոխադարձ: Նա չգիտեր, և ես էլ չգիտեի, որ սիրում եմ նրան: Փոխադարձ է եղել սերը, որովհետև միշտ նրան եմ սիրել: Իսկական սերը չի կարող փոխադարձ չլինել: Ցավում եմ, Մարգրեթ, բայց, ավաղ, ես ու դու երբեք միմյանց չենք սիրել: Հասկանում եմ, թե ես, թե դու՝ իրար չենք սիրել:

Դադար:

Այս ամենից հետո, ինչպես միշտ, առաջացավ կարճատև դադար, հետո Մարգրեթն ասաց.

-Ես դա գիտեի: Համաձայն եմ: Չէի ուզենա, կյանքիս ավարտին խոսել այդ մասին. կարծում եմ, երբ արդեն ութսունչորս տարեկան եմք, էական չէ՝ ինչ է եղել անցյալում, առավել ևս, որ այն ինչ եղել է անցյալում, պետք է անցած լիներ ու այլևս չվերադառնար, բայց արի ու տես՝ վերադարձավ: Դու ինքդ վերադարձրիր ամեն ինչ, Ալբերտ: Որ այդպես է, ես կասեմ այն ինչ երբեք չէի ասի, եթե ինքդ չսկեսեիր:

Իսկական սերը միայն փոխադարձ է լինում, ես դա գիտեմ: Այս բոլոր տարիների ընթացքում ես ու Դենին սիրեկաններ ենք եղել:

Ամեն շաբաթ մենք հանդիպում էինք: Հաճախ մենք Դենիի հետ ինչ-որ տեղ էինք մեկնում, հիշում եմ ես իմ գործուղումները.... դու անգամ չէիր նկատում, որ իմ գործուղումները երբեմն համընկնում էին քո ընկեր Դենիի բացակայության հետ:

Լինում էին պահեր, երբ ուզում էինք ամեն ինչ խոստովանել քեզ ու Սանդրային և փոխել մեր կյանքերը: Բայց մենք չգիտեինք, որ Սանդրան սիրում է քեզ, իսկ դու ինքդ էլ չգիտեիր, որ սիրում ես Սանդրային: Չէ որ մենք շատ էինք գնահատում ձեզ, և չէինք ուզում կործանել մեր ընկերությունը: Եվ մենք չէինք ուզում ձեզ ցավ պատճառել հանուն միայն մեր երջանկության: Եվ մենք որոշեցինք զոհաբերել մեր սերը հանգամանքներին: Մենք սիրում էինք միմյանց, մենք տանջվում էինք, բայց, միևնույն է յուրովի երջանիկ էինք: Երբ Դենին մահանում էր ես նույնիսկ նրան հրաժեշտ տալու չգնացի, չգնացի վախենում էի՝ չեմ զսպի ինձ, ու Սանդրան ամենն ինչ կհասկանար: Ես ու Դենին նախօրոք պայմանավորվել էինք, մեզանից ով էլ առաջինը մեռնելիս լինի, մյուսը չի գա, հրաժեշտ չի տա...

Եվ այստեղ Մարգրեթը չդիմացավ, լաց եղավ հունգուր-հոնգուր: Ալբերտը նստած էր անշարժ, լուռ ու մունջ: Հավանաբար ցնցված էր: Նա ոչինչ չէր ասում, անգամ չէր փորձում հանգստացնել կնոջը: Այսպես էլ նստած էին. Մարգրեթը հեկեկում էր, իսկ Ալբերտը նայում էր մի կետի: Նստած էին՝ մի ձեռք կին ու մի ձեռք տղամարդ, որ տարօրինակ էին ապրել կյանքը:

Վերջապես՝ Մարգրեթը հանգստացավ և ասաց.

-Ալբերտ, եթե դու շուտ հասկանայիր, որ սիրում ես Սանդրային և հայտնեիր ինձ այդ մասին, հավանաբար, բոլորս կկարողանայինք փոխել մեր կյանքը ու երջանիկ կլինեինք: Բայց չեղավ այդպես: Ուրեմն այդպես պետք է լիներ: Համաձայն եմ, որ սերը կարող է լինել միայն փոխադարձ, Ալբերտ, և ներիր այս դաժան անկեղծության համար:

Եվ դադար:

Երկրորդ տղամարդ

-Ես ուզում եմ պատմել ձեզ Դենիի մասին:

Առաջին տղամարդ

-Այո՛: Ներիր, որ ընդհատում եմ, շատ կարևոր բան եմ ուզում ասել, միայն ուզում եմ ասել, որ Սանդրան և Դենին հարազատ քույր և եղբայր էին: Մոռացել էինք պատմել:

Նրանք քույր - եղբայր էին, բայց նրանց մայրերը տարբեր էին, հայրն էր նույնը, Դենին իր հոր առաջին կնոջից էր, նրան մայրն էր մեծացրել: Սանդրան ու Դենին ծանոթացել էին , երբ Դենին երեսուն տարեկան էր, իսկ Սանդրան՝ քսանյոթ: Նրանք անմիջապես սիրահարվեցին և ամուսնացան: Բնականաբար, բոլոր ազգականները դեմ էին այդ ամուսնությանը: Հատկապես դեմ էր հայրը, բայց նրանք որևէ մեկին չլսեցին, ամուսնացան, խզեցին հարաբերությունները բոլոր հարազատների, հատկապես՝ հոր հետ: Հայրն անիծեց և մինչ ի մահ չայցելեց նրանց: Ընդամենն այսքանն էի ուզում ասել: Ներիր, որ ընդհատեցի: Շարունակիր:

Դադար

Առաջին տղամարդ

Այն որ նրանք քույր - եղբայր էին, իհարկե կատակ է, Դենին և Սանդրան քույր և եղբայր չէին, կատակ էր:

Եկրորդ տղամարդ

Ես հիմա կպատեմ Դենիի պատմությունը:

Բանն այն է, որ Դենին այն մարդկանցից էր, որ երբեք-երբեք չեն ստում: Երբ նա 8 տարեկան էր, մի անգամ, գիշերը չէր կարողանում քնել, և հանկարծ, պատուհանի ետևում արտասովոր լույս տեսավ: Փոքրիկ Դենին մոտեցավ պատուհանին և տեսավ երկնքից կախված մի հսկա արծաթագույն սկավառակ: Նա տեսավ հսկայական այլմոլորակային նավ: Դա հսկա թռչող ափսե էր: Այն փայլում էր շլացուցիչ, տիեզերքի ամենագեղեցիկ արծաթե լույսով: Դա այնքան ապշեցնող արծաթափայլ լույս էր, որ թվում էր թե նաև բուրում է: Ափսեն ոչ մետաղից էր, ոչ էլ որևէ հայտնի նյութից, ափսեն տափակեցված լուսին էր հիշեցնում, ավելի ճիշտ նորելուկ լուսին: Եթե ջահել լուսինը մեջքը շտկի և դառնա տափարակ, կատացվի ճիշտ այն պատկերը, ինչ տեսավ Դենին:

Ողջ սկավառակը արծաթաշող էր, ավելի ճիշտ՝ լուսնաշող:

Դա այնքան գեղեցիկ, լուսնալույս էր, ասես տիեզերքն ուզում էր, որ Դենիի ողնաշարով մեկ բարալիկ շիթով անցնի հաճելի-հաճելի, մի քիչ նույնիսկ քաղցրահամ սառնություն: Եվ Դենիի մեջքով անցավ հաճելի ու քաղցրահամ սառնություն: Եվ ութամյա տղան պատուհանի մոտ կազնած, հմայված նայում էր այդ շքեղ տիեզերանավին:

Դենին պարզապես ցնցված էր արծաթափայլ լույսով, որ ամենակախարդական, ամենահրաշալիս ու ամենագեղեցիկն էր ողջ տիեզերքում: Դենին կանգնել ու նայում էր այդ ցնցող երևույթին :

Եվ նրա գլխում մի միտք ծագեց՝ վազել, արթնացնել ծնողներին: Բայց, չգիտես ինչու, նա հանկարծ վախեցավ: Վախեցավ այն բանից, որ երբ ծնողներն արթնանան, տիեզերանավը կանհետանա, և ծնողները, բնականաբար, չեն հավատա իրեն, և ամբողջ գեղեցկությունը, որ տեսնում է, մեկ վայրկյանում կվերածվի փոքրիկ տղայի հորինվածքի :

Եվ Դենին հասկացավ, ում էլ պատմի իր տեսածի մասին, միևնույն է չեն հավատա, ոչ ոք չի հավատա, ոչ ոք, չեն հավատա, որ այն ինչ տեսնում է, այս հրաշքը, ողջ տիեզերքի լավագույն արծաթափայլ այս լույսը, կդառնա շատ սովորական մի սուտ: Եվ Դենին հանկարծ հասկացավ, ողջ սարսափը, որ կատարվում է աշխարհում: Նա հասկացավ պատճառը. մարդիկ անվերջ ստում են իրար, մարդիկ հաճախ միմյանց չեն ասում ճշմարտությունը, նա հասկացավ, որ հենց այս պատճառով ոչ ոք ոչ ոքի արդեն չի հավատում: Եվ այս պարզ միտքը ծագեց նրա գլխում: Դենին

նայելով տիեզերքի ամենահրաշալի արծաթափայլ լույսին, նայելով օդում կախված թռչող ափսեին,ինքն իրեն երդվեց, որ այլևս երբեք, երբեք որևէ մեկին չի ստելու: Երբեք-երբեք, ինչ էլ որ լինի: Եվ Դենին չխախտեց իր երդումը: Մինչև մահ նա երբեք չստեց. ճիշտ է, եթե չէին հարցնում, նա կարող էր ինչ-որ բան նաև չասել, ինչպես օրինակ՝ տիեզերանավի մասին. նա այդպես էլ որևէ մեկին չպատմեց: Եվ միայն մի մարդ կար աշխարհում, որ գիտեր այդ պատմությունը: Այդ մարդը Սանդրան էր: Որովհետև Դենին Սանդրային շատ էր սիրում :

Առաջին տղամարդ

Հիմա կպատմեմ ձեզ Դենիի և Մարգրեթի պատմությունը: Դենին և Մարգրեթը ծանոթացան Դենիի և Սանդրայի հանդիպումից մեկ տարի առաջ, որովհետև այդ ժամանակ Մարգրեթը ամուսնացավ Դենիի լավագույն ընկերոջ՝ Ալբերտի հետ: Երբ Դենին ու Մարգրեթը ծանոթացան նրանց միջև անմիջապես շատ ջերմ ընկերական հարաբերություն հաստատվեց: Ալբերտը զարմացած էր, որ իր ընկերը և կինը այդքան շուտ մտերմացան, իսկական ընկերներ դարձան: Մեկ տարի անց ծանոթացան Դենին և Սանդրան: Դենին Սանդրայի նկարը ցույց տվեց Մարգրեթին և հարցրեց, արդյոք նա հավանում է իր նոր ընկերուհուն: Մարգրեթը պատասխանեց, որ շատ է հավանում, և որ Դենին լավ ճաշակ ունի: Եվ հետո, երբ Դենին որոշեց Սանդրային ամուսնության առաջարկություն անել, կրկին եկավ Մարգրեթի մոտ ու հարցրեց, թե ինչ է մտածում Մարգրեթը այն մասին, որ ինքը՝ Դենին ուզում է ամուսնանալ Սանդրայի հետ: Եվ Մարգրեթը պատասխանեց, որ դա գերազանց միտք է, որ ինքը շնորհավորում է, ցանկանում է Դենիին և նրա ընտրյալին երջանկություն:

Դենին և Մարգրեթը իսկական ընկերներ էին:

Դենիի ու Մարգրեթի ընկերությունը ապշեցնում էր Ալբերտին:

- Երբեմն չեմ հասկանում,Դենի,- ասում էր Ալբերտը,- ո՞վ է քո ընկերը, ե՞ս, թե՛ Մարգրեթը:

- Խանդու՞մ ես,- հարցնում էր Դենին:

- Շատ: Ես ուզում եմ, որ կյանքիդ միակ ընկերը ես լինեմ,- կատակում էր Ալբերտը:

- Ներիր, բայց իմ կյանքում կա Սանդրան, այնպես որ դուք առնվազն երեքն եք,-կատակում էր Դենին:

Դադար:

Մի անգամ, երբ Դենին ու Մարգրեթը քառասուն տարեկան էին, երկուսով նստած էին Դենիի ու Սանդրայի տան պատշգամբում: Նրանք երկուսով էին: Սանդրան ու Ալբերտը այգում էին: Դենին ու Մարգրեթը նստած էին սեղանի մոտ՝ դեմ -դիմաց, Դենին սեղանի տակ ոտքն էր ճռճում: Մեկ էլ, նրա ոտքը հանկարծ դիպավ Մարգրեթի ոտքին: Մարգրեթը և Դենին սեղանի տակ ոտքերով հպվեցին: Եվ այդ ժամանակ Մարգրեթը անակնկալ հարցրեց.

-Դենի, ի՞նչ կասես, մենք կկարողանայի՞նք քնել իրար հետ: Այլ կերպ հարցնեմ. մենք կարո՞ղ էինք սիրեկաններ լինել: Միայն խնդրում եմ, լուրջ պատասխանիր, ես չեմ կատակում:

Դենին նայեց Մարգրեթին շատ, շատ տարօրինակ: Շատ-շատ տարօրինակ: Հետո իր ձեռքը դրեց նրա ձեռքին ու ասաց.

-Ոչ, Մարգրեթ, մենք չէինք կարող սիրեկաններ լինել, որովհետև ես շատ եմ սիրում կնոջս և ինձ համար թանկ է ամուսնուդ ընկերությունը:

Դադար:

Իսկ այն, որ Մարգրեթը իր ամուսնուն՝ Ալբերտին ասաց, թե իբր ինքն ու Դենին սիրեկաններ են եղել, պարզապես կատակ էր: Չէ՞ որ մենք գիտեն՝ Մարգրեթը շատ հումորով կին էր:

Կարճատև դադար, ջուր խմելու համար:

Առաջին կին

Իսկ հիմա, ես ուզում եմ պատմել ձեզ մի երեկոյի մասին:
Մի անգամ Դենին ու Սանդրան նստած էին իրենց տան հյուրասենյակում, առանց լույսը վառելու, բացարձակ մթության մեջ և պատուհանից նայում էին աստղերին: Չմեռ էր: Նրանց երեխաները մեկնել էին ուրիշ քաղաք՝ Դենիի մոր մոտ և Սուրբ Ծննդյան արձակուրդներն այնտեղ էին անցկացնելու: Սանդրան ու Դենին երկուսով էին: Նրանք նստել ու նայում էին աստղերին: Աստղալից գիշեր էր: Հանկարծ Դենին ինչ-որ բան զգաց: Ինչ-որ յուրահատուկ, շատ վեհ մի բան: Նա իրեն շատ-շատ լավ զգաց, որ այսպես նստած իր սիրելիի կողքին, նայում է աստղերին: Եվ այդ պահին նա հանկարծ որոշեց պատմել Սանդրային իր մանկության այն դեպքի մասին, երբ տեսել էր այլմոլորակային նավը: Եվ Դենին պատմեց Սանդրային, թե ինչպես էր տեսել լուսարձակող նավը, արծաթափայլ ճառագայթը, որ նավից էր գալիս, և նույնիսկ ասաց, թե ինչպես է որոշում կայացրել երբեք որևէ մեկին չստել:

Դադար:

Եվ հետո, իր պատմության վերջում Դենին մի տեսակ վախվորած հարցրեց Սանդրային. «Հուսամ հավատո՞ւմ ես»:

Դադար:

Եվ հենց այդ պահին Սանդրան հասկացավ, որ կյանքը կազմված է մանր ու գույնզգույն բեկորներից, որ կյանքում ամբողջական ոչինչ չկա, միայն փոքրիկ պատռված կտորներ, որ չկա ընդհանուր սյուժե, այլ կան բազմաթիվ դրվագներ, չկա գլխավոր մի բան, կան մանրուքներ ու մասնիկներ: Որ այդ մասնիկները ոչ մի կերպ չեն դասավորվում ու չեն դառնում ամբողջություն: Երևի անհնար է բացատրել բառերով, բայց Սանդրային հանկարծ թվաց, որ այն աշխարհում, որտեղ ինքն ապրում է,

պակասում է ամբողջականությունը, պակասում է ինչ-որ բան, ինչ-որ մի բան, որ կարող էր կապել և ամբողջացնել ամենը:

Նա նայեց Դենիին ու մտածեց.

-Գրողը տանի, այս աշխարհը ամեննին էլ այլմոլորակայինների տեղը չէ:

Դադար:

Երկրորդ տղամարդ

Իսկ հիմա ես ուզում եմ պատմել ձեզ Ալբերտի մասին: Ալբերտը շատ լավ մարդ էր, հիմա դուք էլ կհասկանք՝ թե ինչու:

Մի գիշեր Ալբերտը արթնացավ այն բանից, որ ինչ-որ մեկը փողոցից մանր քարեր էր նետում իր պատուհանին: Մարգրեթը խորը քնած էր և ոչինչ չէր լսում: Ալբերտը վեր կացավ, մոտեցավ պատուհանին... Չէ, այնտեղ թռչող ափսե չկար և քարեր նետողը այլմոլորակային չէր՝ Դենին էր: Դենին շարժումներով հասկացնում էր Ալբերտին, որ իջնի իր մոտ: Ալբերտը հագնվեց և դուրս եկավ փողոց:

Այս գրույցը տեղի ունեցավ հազար իննը հարյուր յոթանասունչորս թվականին, երբ Դենին ու Ալբերտը 35 տարեկան էին:

-Դենի՞, ի՞նչ է պատահել,- զարմանքով հարցրեց Ալբերտը:

-Ալբերտ, ես քեզ շատ կարևոր բան պետք է հայտնեմ: Այն վերաբերում է մեզ բոլորիս: Չեմ կարող քնել: Հուզուս մեջ կուտակվածը պետք է ասեմ քեզ: Լսիր ինձ:

Ալբերտն ասաց,- իհարկե, Դենի,-գնանք պատշգամբ, կարող ենք սուրճ կամ թեյ խմել: Եվ նրանք գնացին պատշգամբ և այնտեղ, այդ պատշգամբում Դենին արտասանեց իր կրքոտ մենախոսությունը:

Նա ասաց.

- Ալբերտ, մենք ընկերներ ենք: Դու իմ ամենամոտ ընկերն ես: Քեզնից ու Սանդրայից հարազատ մարդ ես չունեմ: Մի բան եմ ուզում խոստովանել:

Միայն աղերսում եմ, լսիր ինձ և մի ընդհատիր: Շատ կարևոր է, որ չընդհատես և լսես, ես երկար չեմ խոսի: Լսիր: Դու գիտես, որ ես շատ եմ սիրում կնոջս՝ Սանդրային, և ճիշտ այդպես էլ կա: Ես նրան սիրում եմ աշխարհի բոլոր մարդկանցից առավել, և եթե անկեղծ՝ առավել, քան երեխաներիս: Սանդրան ինձ համար միայն կին չէ, նա նաև իմ ընկերն է: Ես սիրում եմ նրան ոչ միայն որպես երեխաներիս մայր, ոչ միայն որպես ընկեր, այլ նաև որպես գեղեցիկ կին: Չե՞ որ դու չես հերքի, որ Սանդրան շատ գեղեցիկ է:

Ալբերտն ուզում էր հաստատել, բայց Դենին թույլ չտվեց, որ նա բառ իսկ ասի, և շարունակեց.

-Սանդրան շատ գեղեցիկ կին է: Ես հիանում եմ նրանով: Ես չեմ հագեցել նրա գեղեցկությունից: նրա գեղեցկությունը սովորական չի դարձել ինձ համար: Ես ամեն օր նայում եմ նրան և նորից ու նորից սիրահարվում տղայի պես: Ես սիրում եմ Սանդրային, երջանիկ եմ նրա հետ: Անկողնում էլ նա հրաշալի է: Ամեն-ամեն ինչ գոհացնում է ինձ: Սանդրան ինձ համար կատարելության մարմնացում է: Ես ուզում եմ մինչ ի մահ նրա հետ ապրել: Ես երբեք նրան չեմ դավաճանել և չեմ էլ պատրաստվում: Երազում եմ մինչև խոր ծերությունն ապրել նրա հետ, մեռնելուց բռնել նրա ձեռքը և ասել նրան ամենակարևոր, ամենաանկեղծ և ամենահուզիչ բառերը, որ կգտնեմ իմ սրտում:

-Իսկ ինչու՞ ես կարծում, թե դու առաջինն ես մեռնելու,- հարցնել Ալբերտը:

-Չեմ կարծում, պարզապես երազում եմ: Երազում եմ ոչ թե առաջինը մեռնել, այլ որ հնրավորություն ունենամ կյանքիս ավարտին ամենակարևոր բառերն ասել Սանդրային: Բայց խնդիրն այս չէ: Ալբերտ, ուզում եմ մեկ էլ ասել քեզ, որ ես սիրում եմ Սանդրային աշխարհում գոյություն ունեցող ամենաիսկական, ամենաանկեղծ, ամենագեղեցիկ սիրով, բայց... ես մեռնում եմ սեքսուալ ցանկությունից, երբ նայում եմ քո կնոջը՝ Մարգրեթին: Ամեն գիշեր նույն երազն եմ տեսնում՝ սեքս կնոջդ հետ: Ես ոչինչ չեմ կարող անել: Դա կամքիցս վեր է: Երբ տեսնում եմ

Մարգրեթին, մեջս ամեն ինչ տակն ու վրա է լինում: գլուխս պտտվում է, նույնիսկ ատամներս են սկսում շիշխկալ:

Եվ միշտ այդպես է եղել. մեր ծանոթության առաջին իսկ օրից, բայց այն ժամանակ ես կարծում էի, թե կկարողանամ հաղթահարել, և իսկապես, երբ հայտնվեց Սանդրան, որոշ ժամանակ ես քո կնոջ մասին չէի մտածում: Բայց վերջերս ամեն ինչ վերադարձավ: Հատկապես հիմա, ամռանը, երբ կանայք հագնում են այդ անիծյալ թեթև զգեստները:

Ալբերտ, չգիտեմ, ինչ է ինձ հետ կատարվում: Բայց սա զուտ հրապուրանք չէ: Հասկանում եմ, անկողին եմ մտնում Մարգրեթի մասին մտածելով, գիշերը տեսնում եմ նրան երագում, արթնանում եմ նրա մասին երագելով, և ներիք, բայց նույնիսկ, երբ Սանդրայի հետ սիրով եմ զբաղվում, ես փորձում եմ չմտածել Մարգրեթի մասին, բայց մտածում եմ: Ես խելագարվում եմ: Չեմ կարող լսել Մարգրեթի ձայնը, լինել նրա կողքին: Չեմ կարող տեսնել նրա ձեռքերը, չեմ կարող տեսնել, թե նա ինչ հրաշալի, ինչ բարի ու խելացի մարդ է: Ինչ բացառիկ է նրա հումորի զգացումը: Մարգրեթի ներկայությամբ աշխարհը այլ կերպ է ընկալվում: Աստված իմ, ինչ երջանկություն, որ աշխարհում կնոջդ՝ Մարգրեթի պես էակ կա:

Շնորհիվ Մարգրեթի գոյությանը ես հավատում եմ, որ այս աշխարհը անհեթեթ չէ: Աշխարհն իմաստավորվում է և այդ իմաստը՝ Մարգրեթն է աշխարհ բերում՝ իր ժպիտով, իր վարվեցողությամբ: Նրա մի հայացքը՝ աշխարհը լցնում է իմաստով և գեղեցկությամբ: Եթե Մարգրեթը կա՝ ուրեմն՝ կա գեղեցկություն, իսկ եթե գեղեցկություն կա, ապրելն իմաստ ունի:

Այսպիսի մտքեր են ինձ այցելում, բարեկամս: Անկեղծ ասած՝ ես շատ, շատ եմ հոգնել այս մտքերից: Չգիտեմ, ինչ է դա: Ասա՝ ինչ է դա Ալբերտ:

- Դա սեր է,- բարեկամս,- հանգիստ պատասխանեց Ալբերտը:

Եվ այդ ժամանակ Դենին ընկավ հատակին, կուչ եկավ ու մանկան պես սկսեց հեկեկալ:

-Ես սիրում եմ կնոջս՝ Սանդրային,- արցունքների միջից մոնչում էր Դենին,- ես գիտեմ, ինչ է սերը, սերը միայն փոխադարձ է լինում:

- Դու սիրում ես Մարգրեթին,- չգիտես ինչու, նույնքան հանգիստ ասաց Ալբերտը:

- Ոչ, ես չեմ ուզում, չեմ ուզում, դա ճիշտ չէ, ճիշտ չէ,- շարունակում էր ռոնալ Դենին:

Ու հետո, երբ Դենին հանգստացավ, նստեց աթոռին ու տաք թեյ խմեց, Ալբերտը դարձյալ շատ, շատ հանգիստ ասաց,- Դու սիրում ես Մարգրեթին, Դենի: Այն ինչ նկարագրեցիր, քո զգացմունքներն ու զգացողությունները, դրանք բոլորը սիրո հաստատ նշաններն են: Դու սիրում ես Մարգրեթին, կասկած չկա բարեկամս:

- Բայց ես ասում, չէ՞, որ սիրում եմ, և ուզում եմ սիրել Սանդրային: Այ, օրինակ, եթե հիմա ստիպված լինեի ընտրել, թե ում հետ պետք է ապրեմ, Ալբերտ, ներիր, խնդրում եմ...

- Ոչինչ, ոչինչ, բարեկամս,- ասաց Ալբերտը:

- Օրինակի համար եմ ասում, Ալբերտ,-շարունակեց Դենին, եթե պետք լիներ ընտրել, ում հետ լինել՝ Սանդրայի, թե Մարգրեթի, ապա երդվում եմ, առանց վայրկյան անգամ վարանելու ես կընտրեի Սանդրային: Ես չեմ ուզում Մարգրեթի հետ ապրել: Ես շատ գոհ եմ, որ ապրում եմ Սանդրայի հետ: Ամեն ինչից գոհ եմ, հասկանում եմ, բացառապես ամեն ինչից: Ես չեմ համարում, թե Մարգրեթը Սանդրայից ավելի գեղեցիկ կամ սեքսուալ է: Ես ամեն ինչից գոհ եմ, ես սիրում եմ Սանդրային, ոչ՝ Մարգրեթին: Բայց ինչու՞ եմ կնոջդ մասին մտածելիս, կորցնում ինձ:

-Իսկ ես գիտեմ,- ասաց Ալբերտը,- դու էլ գիտես, բարեկամս: Արի չխաբենք ինքներս մեզ, ես քեզ վաղուց եմ ճանաչում, և չեմ հիշում, որ երբևէ ստած լինես:

- Այդ դեպքում ինչ է սերը,- շատ միամտորեն հարցրեց Դենին:

-Մերն այն է, ինչ զգում ես իմ կնոջ հանդեպ,- շատ իմաստնաբար պատասխանեց Ալբերտը:

Այս տեսարանը հոր և որդու երկխոսություն էր հիշեցնում: Դենին նման էր մի պատանու, որ եկել էր իմաստուն հոր մոտ պարզելու, թե ի՞նչ է սերը: Իսկ Ալբերտն իմաստուն ու հանգիստ հոր պես էր. գիտեր, որ գալիս է մի ժամանակ, երբ սերը թակում է պատանի սրտերը, և հիմա հին ընտանեկան ավանդույթի համաձայն, հայրը կյանքում առաջին անգամ կպատմի իր որդուն՝ թե ինչ է սերը:

- Իսկ ինչպես կոչել այն զգացմունքը, որ տածում եմ կնոջս՝ Սանդրայի հանդեպ:

- Դատելով ամենից, քեզ հեշտ է նրա հետ ապրելը, Դենի, ընդամենն այդքանը:

Եվ պատշգամբում հայտնվեց Մարգրեթը: Նա արթնացել էր Դենիի բարձրաճիչ ոռնոցից: Իհարկե Մարգրեթը չէր լսել, ինչի մասին էր խոսում Դենին: Այդ պատճառով եկել էր պատշգամբ՝ պարզելու, թե ինչ է կատարվում երկու տղամարդկանց միջև գիշերվա ժամը երկուսն անց կեսին:

-Բարի երեկո,- ասաց Մարգրեթը,- ներեցեք, որ միջամտում եմ ձեր խոսակցությանը, բայց...

Այդ պահին Դենիի դեմքը սպիտակեց ճենապակյա ավսեի պես: Նա ոտքի կանգնեց, օդում թափահարեց ձեռքերը, ճոճվեց և ընկավ հատակին: Նա կորցրեց գիտակցությունը:

Դադար:

Ալբերտը շատ լավ մարդ էր: Բնականաբար իր և Դենիի խոսակցության մասին նա ոչինի չասաց Մարգրեթին: Այդ իսկ պատճառով նա ստիպված եղավ խաբել Մարգրեթին, ասել, որ Դենին ծանր նյարդային խանգարում ունի, կապված այն բանի հետ, որ արդեն երեսունհինգ տարեկան է. նրա մոտ միջին տարիքի ճգնաժամ է սկսվել, իսկ այդ ճգնաժամը տղամարդկանց հոգեկան մեծ տագնապ է պատճառում: Ալբերտը խաբեց

Մարգրեթին, որովհետև նման չէր Դենիին. Դենին երբեք չէր ստում: Ալբերտը շատ սովորական ու շատ լավ մարդ էր:

Այս դեպքից անմիջապես հետո Դենին ու Սանդրան երեք ամսով արձակուրդի մեկնեցին: Մեկնեցին Ավստրալիա, որովհետև Դենին ուզում էր անպայման ուրիշ մայրցամաք մեկնել: Եվ երբ երեք ամիս անց նրանք վերադարձան, Ալբերտի և Դենիի ընկերությունը շարունակվեց, ասես ոչինչ էլ չէր եղել: Եվ ընդհանրապես, ամեն-ամեն ինչ վերադարձավ իր տեղը: Եվ այս երկու հրաշալի ամուսնական զույգերը շարունակում էին ապրել ու ծերանալ միասին:

Կարճատև դադար, ջուր խմելու համար:

Առաջին տղամարդ

Իսկ ահա շատ զվարճալի պատմություն, թե ինչպես էր մի անգամ Ալբերտը հաշիշ ծխել: Երբ Ալբերտն արդեն քառասունութ տարեկան էր, որոշեց մարիխուանա ծխել: Այսպես ստացվեց՝ ուսանողներից մեկը առաջարկեց նրան միասին հաշիշ ծխել: Չեմ ուզում մանրամասնել, ասել, թե ինչ խոտ էր, որտեղից էր հայտնվել ուսանողի մոտ, ինչու էր այդ ուսանողը որոշել իր պրոֆեսորին մարիխուանա առաջարկել... Ոչ, այս մասին, թերեևս կպատմեմ: Այդ ուսանողը իր պրոֆեսորին մարիխուանա էր առաջարկել, որովհետև Ալբերտը դասախոսության ժամանակ պատմում էր, թե ինչպես է օգտագործվում կանեփը նավերի ճոպաններ պատրաստելու համար: Պարզվում է, ճոպանների մեծ մասը ստանում են հենց կանեփից: Եվ ահա, նավաճոպանների մասին դասախոսություն կարդալու ժամանակ, Ալբերտը բերանից թոցրեց, թե ինքը երբեք մարիխուանա չի փորձել: Կարճ ասած, նրա ուսանողը կատակով՝ առաջարկեց իր դասախոսին ծխել: Եվ Ալբերտը, ի զարմանս ուսանողի՝ համաձայնեց, ըստ որում ոչ թե պարզապես համաձայնեց, այլ՝ վերցրեց ու ծխեց:

Դադար:

Եվ ահա, երբ Ալբերտը ծխեց, բառացիորեն մի քանի րոպե անց, նա հանկարծ զգաց, որ իրեն շրջապատող աշխարհը...Չգիտեմ, ինչպես կարելի է ասել...

Մի խոսքով, այս աշխարհը...

Կարճ ասած, այս աշխարհը դարձավ փափուկ:

Ալբերտը ձեռքերը պարզեց առաջ և շոշափեց աշխարհը: Այն փափուկ էր: Ալբերտը կանգնած էր ձեռքերն առաջ մեկնած, և հանկարծ սկսեց լաց լինել:

-Ձեզ օգնե՞մ, պարոն պրոֆեսոր,- վախեցած հարցրեց ուսանողը:

- Ոչ,-արցունքների միջից պատասխանեց Ալբերտը,- ես ինձ լավ եմ զգում, պարզապես աշխարհի հատկությունների վերաբերյալ ես նոր բան հայտնաբերեցի:

- Եվ ի՞նչ հայտնաբերեցիք,- ծիծաղը հազիվ զսպելով հարցրեց ուսանողը: Անասելի ծիծաղելի էր հաշիշ ծխած դասախոսը:

- Աշխարհը փափուկ է,- տարօրինակ ձայնով ասաց Ալբերտը,- ես միշտ կարծել եմ, թե աշխարհը կոշտ է, իսկ այն շատ փափուկ է, սա ցնցող է և շատ, շատ տխուր է: Տխուր է, որովհետև սովորական վիճակում մենք դա չենք նկատում և ապրում ենք կոշտ աշխարհում:

Եվ Ալբերտը կրկին ու կրկին ձեռքերով շոշափում էր աշխարհը, ապշելով աշխարհի փափկության վրա:

Այս ամենը շարունակվում էր այնքան, քանի չէր ավարտվել հաշիշի ազդեցությունը: Իսկ հետո, երբ թմրադեղի ազդեցությունն անցավ, և աշխարհը կրկին դարձավ կոշտ, Ալբերտը մաքրեց արցունքները, շնորհակալություն հայտնեց ուսանողին ծառայության համար և գնաց տուն: Տունդարձի ճանապարհին աշխարհն Ալբերտի շուրջ ավելի ու ավելի էր կոշտանում, ու երբ նա հասավ իր տան շեմին, աշխարհն արդեն

ամբողջովին քարի մեծաբեկոր էր: Ալբերտը մտավ տուն, տեսավ Մարգրեթին և ասաց.

-Միրելիս, ես ամուր եմ չուզունե մուրճի պես:

Մարգրեթն, ինչպես միշտ, իրեն ստիպեց ժպտալ ամուսնու կատակին ի պատասխան, թեպետ նա արդեն վաղուց վարժվել էր ամուսնու ինքնատիպ հումորին:

Երկրորդ կին:

- Իսկ հիմա ես կպատմեմ ձեզ Մարգրեթի անհետանալու պատմությունը: Մի անգամ Ալբերտը շատ ուշ տուն վերադարձավ՝ կեսգիշերին մոտ: Նա մտավ տուն և որոշ ժամանակ անց հայտնաբերեց, որ իր կինը տանը չէ: Եվ նա զանգահարեց ընկերոջը՝ Դենիին ու հարցրեց,-

- Մարգրեթը ձեզ մոտ չէ՞:

Եվ Դենին պատասխանեց- որ Մարգրեթը իրենց տանը չէ, և որ ինքն ու Մանդրան արդեն քնած են: Հետո Ալբերտը զանգեց իրենց մի քանի ծանոթներին, որոնց, Ալբերտի կարծիքով, Մարգրեթը կարող էր հյուր գնալ: Բայց նա այնտեղ չէր: Իսկ հետո Ալբերտը զանգահարեց իրենց այն ծանոթներին, ում Մարգրեթը դժվար թե հյուր գնար, բայց այնուամենայնիվ զանգահարեց նրանց, որպեսզի համոզվի, որ Մարգրեթն այնտեղ չէ: Այդ ժամանակ նա զանգահարեց Մարգրեթի ծնողներին, որ ուրիշ քաղաքում էին ապրում և վախեցրեց նրանց իր հարցով. «Մարգրեթը ձեզ մոտ չէ՞»: Բնականաբար, նա այնտեղ չէր, բայց Մարգրեթի ծնողները նույնպես միացան հեռախոսով որոնումներին: Վերջին քայլը, որ ձեռնարկեց Ալբերտը այն էր, որ նա սկսեց զանգահարել մորգեր ու հիվանդանոցներ: Եվ դա նրանից որոշ ժամանակ խլեց: Ուզում եմ հիշեցնել ձեզ, որ այն ժամանակ բջջային հեռախոսներ չկային, Ալբերտը զանգում էր քաղաքային հեռախոսով ու երկար սպասում էր միացմանը:

Եվ ահա, երբ Ալբերտը զանգեց իրեն հայտնի վերջին հիվանդանոցը, որտեղից հայտնեցին, թե ոչ մի Մարգրեթ էլ այսօր չեն բերել իրենց հիվանդանոց, և Ալբերտը հոգնած ցած դրեց լսափողը, հենց այդ րոպեին սենյակում դրված մեծ պահարանից լսեց Մարգրեթի ձայնը.

- Ես այստեղ եմ, Ալբերտ, զգեստապահարանում, բայց դու շատ կարևոր գործողություն պիտի կատարես, որ ես դուրս գամ այստեղից:

Ալբերտը գունատվեց ու քիչ էր մնում կորցնել գիտակցությունը: Հավաքելով իր ողջ ուժը, Ալբերտը նետվեց պահարանի մոտ, բայց պարզվեց, որ այն բանալիով կողպված է:

- Ինչպե՞ս ես հայտնվել այդտեղ, Մարգրեթ,- անհանգստացած բղավեց Ալբերտը:

- Ես պահարանում եմ,- հանդիսավոր ձայնով պատասխանեց Մարգրեթը, Ալբերտը վախեցավ, ձայնի այդ ելևջից պարզ էր, որ Մարգրեթը խելագարվել է:

- Դու պետք է ազատես ինձ այստեղից: Այս աշխարհից: Եվ որպեսզի կարողանաս դա անել, պետք է երգես: Պետք է երգես կախարդական հմայանքի երգ:

- Ինչպես ես հայտնվել այդտեղ, Մարգրեթ,- բղավեց Ալբերտը,- ո՞վ է քեզ փակել այդտեղ:

- Ինքս եմ փակվել, որովհետև ուզում եմ, որ դու ինձ հետ խաղաս այս խաղը: Խնդրում եմ, Ալբերտ, մի բարկանա, խաղա ինձ հետ: Թեթև տար, սա ընդամենը խաղ էլ: Դու պետք է ինձ դուրս կանչես պահարանից, իսկ որպեսզի ես դուրս գամ պահարանից, դու պետք է ինձ համար կախարդական երգ երգես: Հորինիր որևէ կախարդական երգ ու երգիր:

Այս ամենին, իհարկե հաջորդեց շատ երկար վեճի տեսարան: Ալբերտը բղավում էր Մարգրեթի վրա, փորձում էր կոտրել պահարանը, բայց դե պահարանը հին էր և կաղնուց, այն կոտրելն անհնար էր, առավել ևս, որ Ալբերտը կատաղած էր և չէր կարողանում կենտրոնանալ:

Ի վերջո Մարգրեթը, առանց կախարդական երգի դուրս եկավ պահարանից: Նա բացեց սողնակները, և դռները իրենք իրենց բացվեցին: Ալբերտը շատ ուշադիր զննում էր Մարգրեթին, փորձելով հասկանալ

խելագարվե՞լ է ,արդյոք, իր կինը և, գրողը տանի, ի՞նչ է կատարվում գիշերվա ժամը երկուսին:

Այդ ժամանակ Մարգրեթը նստեց հատակին և ասաց.

- Մի բարկանա: Խելքս չեմ թոցրել, ես պարզապես ուզում էի խաղալ, հասկանում ես: Բոլորիս կյանքում լինում են պահեր, անվանենք դրանք «տարօրինակության պահեր», երբ շատ ես ուզում պարզապես խաղալ:

- Ուրեմն դա խա՞ղ էր,- հարցրեց Ալբերտը և նայեց Մարգրեթին մի հայացքով, որ լի էր ցավով ու թախիծով:

-Խենթության բուռներ էին,-անվրդով պատասխանեց Մարգրեթը,- և պատկերացնում ես, մի քանի ժամ պահարանում էի, բայց բոլորովին չիշիկ անել չուզեցի: Հետաքրքիր են չե՞ կանայք,- կատակեց Մարգրեթը, ու նայեց Ալբերտին, ժպտաց:

Կամ, համենայնդեպս, փորձեց ժպտալ:

Երկրորդ տղամարդ

- Ես ուզում եմ պատմել ձեզ Դենիի ու կլոր քարի պատմությունը: Երբ Դենին ու Սանդրան Ավստրալիայում էին, մի անգամ զբոսնելիս Դենին հենց ճանապարհին տեսավ մեծ կլոր քար: Դա սովորական, ձիու գլխի չափ կլոր քար էր: Դենին ու Սանդրան անցան այդ քարի կողքով, բայց հանկարծ Դենին կանգ առավ: Նա ինչ-որ մեծ հակում զգաց այդ քարի հանդեպ: Նրան հանկարծ թվաց, թե իր ու այդ քարի մեջ ինչ-որ յուրահատուկ կապ կա: Եվ Դենին վերադարձավ ու նստեց քարին: Նստեց քարին ու փակեց աչքերը: Այդպես փակ աչքերով քարին նստած մնաց, մինչև լսեց Սանդրայի ձայնը:

- Լա՞վ ես Դենի,- հարցրեց Սանդրան:

- Այո,- առանց աչքերը բացելու պատասխանեց Դենին,- ներիր Սանդրա, բայց որոշ ժամանակ ես պետք է մնամ այս քարին նստած, կսպասե՞ս:

- Իհարկե կսպասեմ Դենի: Եթե անպայման ուզում ես նստել այդ քարին, ես, անշուշտ, կսպասեմ, ինչքան որ պետք է:

Սանդրան սկսեց պտտվել Դենիի շուրջ, իսկ Դենին նստած մնացել էր քարին աչքերը փակած:

Անցավ մեկ ժամ ինչ Դենին նստած էր, վերջապես Սանդրան չդիմացավ և ասաց.

-Ամեն ինչ հասկանում եմ, Դենի, երևի քեզ անհրաժեշտ է նստել այդ քարին, չեմ կասկածում, որ դրա համար ծանրակշիռ պատճառներ ունես, բայց ես ի՞նչ անեմ: Ես արդեն մեկ ժամ է պտտվում եմ քո շուրջ, ես ի՞նչ անեմ:

- Գտիր քո տեղն այս աշխարհում,- պատասխանեց Դենին:

- Ի՞նչ, ի՞նչ անեմ- հարցրեց Սանդրան:

- Գտիր քո տեղն այս աշխարհում - կրկնեց Դենին,- ամեն ինչ պետք է որ ունենա իր տեղը, ծառն իր տեղում է աճում, ծաղիկը՝ իր, թռչունն իր հետագծով է թռչում: Մարդն էլ պարտավոր է գտնել իր տեղն այս աշխարհում:

- Շատ հետաքրքիր տեսություն է, թանկագինս,- ասաց Սանդրան:- Իսկ դու՞, դու արդեն գտե՞լ ես քո տեղը:

- Այո,- պատասխանեց Դենին,- գտել եմ, ճիշտ է, վերջերս, ավելի ստույգ՝ ընդամենը կես ժամ առաջ: Սա է իմ տեղը, ուր ես նստած եմ: Ահա իմ տեղն այս աշխարհում:

Սանդրան նայեց Դենիին: Դենին նորից փակեց աչքերն ու կախեց գլուխը:

Այդ ժամանակ Սանդրան մեջքով դարձավ նրան ու գնաց: Գնաց այնտեղ, որտեղից եկել էին: Վերադարձավ այն փոքրիկ քաղաքը, որտեղ նրանք կանգ էին առել: Այդ քաղաքը կոչվում էր Հյուսիսային Դարվին: Սանդրան

վերադարձավ հյուրանոց, պատկեց մահճակալին, ձեռքերով ծածկեց դեմքը, և հեկեկալով լաց եղավ: Սանդրան տեղը չէր գտնում, չէր գտնում մի հարմար տեղ, չէր կարողանում գտնել մի տեղ, ուր կկարողանար ապրել:

Առաջին կին

Ես ուզում պատմել ձեզ Սանդրայի ու վարդագույն շերտի պատմությունը: Մի անգամ Դենին ու Սանդրան գնացել էին Ավստրալիա: Այնտեղ նրանք հաճախ էին զբոսնում փոշոտ ճանապարհներով, նստում էին կլոր քարերի վրա, հիանում էին գեղեցիկ տեսարաններով: Եվ ահա, մի անգամ զբոսանքներից մեկի ժամանակ Սանդրան հեռու-հեռու հորիզոնում երկար վարդագույն շերտ տեսավ: Այդ երկար վարդագույն շերտը աղջնակի ժապավեն էր հիշեցնում, որ ձգվել էր բլուրների գագաթների վրայով:

- Նայիր, Դենի,- ասաց Սանդրա,- տենում ես այն վարդագույն գիծը հորիզոնում, ինչ ես կարծում, երեկոյան արևի ճառագայթ է դա, թե՛ բլուրների վրա գտնվող վարդագույն մի բան է արտացոլվում:

Կարճատև դադար:

Կարճատև դադար եղավ: Դենին ուշադիր նայեց հորիզոնին: Նա ուսումնասիրում էր հորիզոնը, ճիշտ այնպես, ինչպես աճուրդային փորձագետն է ուսումնասիրում կտավները: Որոշ ժամանակ անց Դենին վերջապես ասաց.

- Գիտես ինչ Սանդրա, իմ կարծիքով պետք չէ սեփական կյանքը ողբերգություն դարձնել: Այո, կյանքը տխուր բան է, այո, հաճախ այն անիմաստ է, այո կյանքում չկա հաստատուն որևէ բան, բայց չէ՞ որ դու ունես ինձ, իսկ ես ունեմ քեզ: Եվ այն, որ մենք կանք մեկս մյուսի համար՝ արդեն մեծ հաջողություն է:

Սանդրան նայեց Դենիին և ժպտաց: Հետո նրանք լուռ քայլում էին. Սանդրան իր մտքերով, Դենին՝ իր: Սանդրան մտածում էր հորիզոնի վարդագույն ժապավենի մասին:

Եվ հետո հանկարծ ասաց,- Գիտես ինչ, Դենի ամեն ոք պետք է ունենա մի իր, որին նայի հուսատության պահին և խաղաղվի: Այնպես որ հորիզոնի վարդագույն գիծը կարող է լինել այդ իրը:

- Միթե՞ հորիզոնի վարդագույն գիծը իր է, Սանդրա,- թերահավատորեն հարցրեց Դենին:

- Այո, իր է,- պատասխանեց Սանդրան: Եվ Սանդրան ու Դենին շարունակեցին ճանապարհը դեպի բլուրները, հասան բլուրի գագաթին, և նրանց առջև բացվեց մի մեծ հարթավայր: Հեռվում հորիզոնի գծի վերևում կախված էր արևը, որից բոլոր կողմերով վարդագույն ճառագայթներ էին տարածվում:

- Ահա և իրական պատճառն այն վարդագույն գծի, որի մասին հարցնում էիր. դա արևի մայրամուտն է,- ասաց Դենին:

Եվ Սանդրան լաց եղավ, նա հեկեկում էր քառասուն րոպե, և Դենին չգիտեր՝ ինչպես օգնել նրան: Նա ինքը հուսահատ վիճակում էր: Նրա սիրտը ցավից կծկվում էր Սանդրայի համար, բայց չգիտեր՝ ինչ անել: Դենին նստեց գետնին, գլուխը բռնեց ու հայացքն ուղղեց հորիզոնին: Հարթավայրի վրա կախված էր մայրամուտի վարդագույն գիծը: Դենին նստած նայում էր վարդագույն գծին: Հանկարծ նա հանդարտվեց: Իրեն լավ զգաց: Շրջվեց ու տեսավ, որ Սանդրան նույնպես խաղաղվել է: Նա նստած էր Դենիից ետ և նույնպես նայում էր հորիզոնի վարդագույն գծին, և նույնպես լավ էր զգում:

Դադար:

Առաջին կին

- Այժմ ժամանակն է պատմել, թե ինչով ավարտվեց այս ամենը:

Առաջին տղամարդ

«Ավարտվեց այս ամենը» ասելով, մենք նկատի ունենք, որ ավարտվեց ամեն բան:

Առաջին կին

- Այո: Իսկ հիմա ես կպատմեմ, թե ինչպես մահացավ Սանդրան: Նա այսպես մահացավ: Երբ Մարգրեթն ամուսնուն՝ Ալբերտին հայտնեց, որ ինքը ամբողջ կյանքում ամուսնու լավագույն ընկերոջ՝ Դենիի սիրուհին է եղել, իսկ դուք հիշում եք, որ իրականում այդպես չէր, պարզապես կատակ էր, Մարգրեթը հումորով կին էր...

Այսպես, ուրեմն, այն լուրը, թե իբր Մարգրեթն ու Դենին սիրեկաններ են եղել, Ալբերտի վրա շատ տարօրինակ ազդեցություն ունեցավ: Նրան ամենևին չտխրեցրեց այն փաստը, որ իր կինը, ում հետ նա ապրել է հիստներեք տարի, պարզվում է ամբողջ կյանքում դավաճանել է իրեն:

Ընդհակառակը՝ Ալբերտին շատ ուրախացրեց Մարգրեթի ասածը, որովհետև նա հիմա վերջնականապես և անդառնալիորեն համոզվեց, որ սերը միայն փոխադարձ է լինում: Եվ այդ ժամանակ նա որոշեց գնալ Սանդրայի մոտ, և հայտնել մահից առաջ, որ ինք՝ Սանդրան, սխալվել է կարծելով, թե սերը լինում է նաև անփոխադարձ, որ ինքը՝ Ալբերտը միշտ սիրել է Սանդրային, ուստի իրենց սերը փոխադարձ է եղել: Որ իսկական սերը միշտ փոխադարձ է լինում: Ալբերտն ուզում է, որ Սանդրան մահանա այս մտքերով, որովհետև դա շատ կարևոր է: Եվ նա գնաց Սանդրայի մոտ, և Սանդրան դեռ ողջ էր, և Ալբերտն ասաց, որ ինքը սիրում է և միշտ սիրել է Սանդրային, և որպես լրացուցիչ օրինակ պատմեց Սանդրային Դենիի ու Մարգրեթի մասին, այնպես որ, Սանդրան մեռնելուց առաջ իմացավ, որ Դենին, դավաճանել է իրեն ողջ կյանքում, պարզվում է բոլոր այն հուզիչ խոսքերը, որ Դենին իրեն ասաց մեռնելուց առաջ՝ սուտ էր: Եվ պարզվում է, որ Դենին ամենևին էլ այն մարդը չէր, որ երբեք չի ստում, և որ այլմոլորակայինների մասին Դենիի պատմածը նույնպես հորինված էր... Եվ այսպիսի տխուր մտքերով Սանդրան մահացավ:

Առաջին կին

- Իսկ հիմա ես կպատմեմ, թե ինչպես մահացավ Մարգրեթը: Բոլորս հիշում ենք, որ Ալբերտը հասցրեց այցելել Սանդրային մահից առաջ, ու շատ հետաքրքիր բաներ պատմեց նրան: Եվ Ալբերտը մահամերձ Սանդրայի մոտից դուրս եկավ իր պարտքը կատարած մարդու հպարտությամբ և ուղղվեց դեպի տուն: Տուն հասնելով նա որոշեց մի քիչ նստել պատշգամբում: Եվ և նա որոշ ժամանակ մնաց պատշգամբում հյուսկեն ճոճաթոռին նստած: Ու մտքով հիսուն տարի ետ գնաց, հիշեց այն գիշերը, երբ Դենին այս նույն պատշգամբում պատմում էր Մարգրեթի հանդեպ իր սիրո մասին: Եվ Ալբերտը մտածեց՝ պարզվում է որ Դենին իրեն խաբում էր, չէ որ պարզվեց, որ Դենին իր կնոջ սիրելեանն է եղել: Ալբերտը դեռ չգիտեր, որ Մարգրեթը կատակել է, նա կարծում էր Դենին ու Մարգրեթը սիրավեպ են ունեցել: Բայց չգիտես ինչու Ալբերտը չէր բարկանում Դենիի վրա: Ալբերտը շատ էր սիրում ու հարգում Դենիին, բացի այդ Ալբերտը պարկերացնում էր, թե ինչ դժվար է եղել Դենիին ու Մարգրեթին թաքցնել իրենց սերը, պատկերացնում էր, թե ինչքան են տանջվել:

Ալբերտը շատ, շատ լավ մարդ էր: Պատշգամբի ճոճաթոռին նստած նա հիշում էր Դենիի բառերը, որ հիսուն տարի առաջ նա ասում էր այստեղ: Ալբերտը հիշում էր, ինչպես էր Դենին խոսում Մարգրեթի մասին: Ալբերտը հիշեց Մարգրեթին: Ինչ գեղեցիկ էր նա... հիշեց նրա շարժումները, քայլվածքը, շուրթերը, շունչը: Ալբերտը հիշեց Մարգրեթի մարմնի բոլոր գծերը: Ալբերտը հիշեց Մարգրեթի քնքշությունը: Մարգրեթի խելքը: Մարգրեթը շատ բարի, խելացի, նուրբ մարդ էր: Երբ նա ներս էր մտնում, սենյակն, ասես, լուսավորվում էր նրա գեղեցկությամբ: Մարգրեթը պարզ մարդ էր: Կոկետություն չէր անում, խոսում շատ սովորական, մարդու աչքերին նայելով: Ճիշտ է նա սուր լեզու ուներ, կարող էր երբեմն ծաղրել մեկն ու մեկին, բայց նրան ամեն ինչ ներվում էր, որովհետև Մարգրեթի մեջ սեր կար մարդկանց հանդեպ: Եվ Ալբերտը մտածեց, որ իրականում կնոջ հարցում բախտն իրեն ժպտացել է, և հրաշալի է, որ ինքն ու Մարգրեթը միասին են, ինչ

երջանկություն, հիմա նա կմտնի տուն, կգրկի Մարգրեթին և իր այտը կհպի նրա այտին...

Եվ հանկարծ Ալբերտը վեր թռավ անակընկալ մթթից: Նա հանկարծ մտածեց. «Աստված իմ, ի՞նչ արեցի, չէ որ ես սիրում եմ Մարգրեթին»: Եվ Ալբերտը հասկացավ, որ այսօրվա իր սերը Սանդրայի հանդեպ ոչ այլ ինչ էր, եթե ոչ հիմար ծերուկի հիացական ապրումներ: Հիսունչորս տարի նա Մարգրեթի հետ երջանիկ է եղել և ինքը միշտ սիրել է ու սիրում է Մարգրեթին, իր երեխանների մորը, զարմանալի, գեղեցիկ, հրաշալի կնոջը: Մերը հենց սա է որ կա, ուրիշ ոչինչ:

- Ես սիրում եմ նրան,- բղավեց Ալբերտը:

Նա հանկարծ հասկացավ, որ Սանդրայի բառերը պարզապես արթնացրին իր մեջ քնած երիտասարդությունը: Պարզապես երիտասարդությունը մի պահ արձագանքեց ութսունամյա ծերունու սրտում: Իհարկե, նա երբևէ չի սիրել Սանդրային...անգամ այն օրը, երբ հիացել էր, որ Սանդրան լաց էր եղել խիստնջի համար, երբեք չի սիրել Սանդրային, երբեմն հիացել է նրանով, բայց միշտ սիրել է միայն Մարգրեթին: Սա է ճշմարտությունը:

- Իսկական տոան ծերուկ եմ, այս ինչ եմ անում,- բղավում էր Ալբերտը,- Մարգրեթ, ես քեզ եմ սիրում-:

Նա շտապեց տուն, որ տեսնի իր Մարգրեթին, ծնկի գա նրա առաջ և ամեն ինչ խոստովանի: Բայց հանկարծ, նա մի պահ կանգ առավ: Գլխում ծագեց այն միտքը, թե սերը, փաստորեն, կարող է և անփոխադա՞րձ լինել, չէ՞ որ Մարգրեթը սիրել է Դենիին:

- Բայց չէ՞ որ ես սիրում եմ նրան- բղավեց Ալբերտը,- ես սիրում եմ Մարգրեթին, սիրում եմ նրան - բղավում էր Ալբերտը-գրողի ծոցն անցնեն բոլոր կոնցեպցիաները, ես սիրում եմ քեզ,- ամբողջ ձայնով բղավում էր Ալբերտը: Սիրում եմ քեզ, Մարգրեթ,- ամբողջ ձայնով բղավեց Ալբերտն ու վազեց տուն:

-Ես քեզ սիրում եմ Մարգրեթ,- հենց տան շեմից բղավեց Ալբերտը:

Կարճատև դադար

Ննջարանի դուռը փակ էր և դռան վրա գրասենյակային կոճգամով թղթի մի կտոր էր փակցված, վրան մատիտով գրված էր. «Միրելիս, նախքան այս սենյակ մտնելը իմացիր, որ ես այնտեղ կախվել եմ. Մարգրեթ»:

Ալբերտը բացեց ննջարանի դուռը: Տեսավ պարանով կախված Մարգրեթին. նա արդեն մեռած էր:

Դադար:

Առաջին տղամարդ

Հիմա ես ձեզ կպատմեմ, թե հետո ինչ կատարվեց... կատարվեց հետևյալը՝ Ալբերտը բժիշկ ու ոստիկանություն կանչեց: Ալբերտը Մարգրեթին չդիպավ. մտածում էր, թե ոստիկանությունն այդպես ավելի հեշտ կկարողանա քննել մահվան պատճառը: Անկեղծ ասած, նա պարզապես վախենում էր դիպչել Մարգրեթին: Իսկ ինչ վերաբերում է մահվան պատճառի քննությանը....

Պատճառը շատ խորն էր, որպեսզի հասկանալի լիներ քննիչին կամ բժշկին: Մահվան պաշտոնական պատճառը, որ հետագայում արձանագրվեց՝ ինքնասպանությունն էր:

Սեղանին մահից առաջ գրած Մարգրեթի նամակն էր: Ալբերտը վերցրեց նամակը, գնաց պատշգամբ, նստեց հյուսկեն ճոճաթոռին, բացեց նամակը և սկսեց կարդալ. «Թանկագին Ալբերտ, ես որոշեցի այս բանն անել, որովհետև վերջնականապես դադարեցի հասկանալ, թե այստեղ ինչպես է ամեն բան գործում: Ես չեմ հասկանում՝ ո՞նց է ամեն ինչ դասավորվում, ինչն ինչից է սկիզբ առնում: Չեմ տեսնում պատճառները: Ես չեմ գտնում օրենքը: Չեմ գտնում հաստատուն որևէ բան: Հաստատուն մի բան պիտի լինի, թե ոչ, Ալբերտ, չէ՞ որ պետք է լինի հաստատուն մի բան, այս հսկա, փոփոխական տիեզերքում, Ալբերտ, չէ որ հաստատուն ինչ-որ բան պետք է լինի այս փոփոխական տիեզերքում, Ալբերտ...»

Եվ հետո ամբողջ երկու էջ լցված էր այդ միակ նախադասությամբ: Հավանաբար, երբ Ալբերտը Մանդրայի մոտ էր ու պատմում էր նրան իր

սիրո մասին և այն մասին, որ Մարգրեթն ու Դենին սիրեկաններ են եղել, այդ ամբողջ ընթացքում Մարգրեթը սեղանի մոտ նստած գրում էր, «Չէ՞ որ պետք է լինի հաստատուն մի բան այս հսկա փոփոխական տիեզերքում»: Երկու էջանոց նամակ, որտեղ շարունակ կրկնվում էր նույն նախադասությունը: Նամակն ավարտվում էր այսպես,- «Մերը կարող է լինել և անփոխադարձ, որովհետև ամբողջ կյանքում ես միայն քեզ եմ սիրել, Ալբերտ: Քեզ եմ սիրում: Դու մեղավոր չես իմ մահվան մեջ: Մեղավորը այս անիծյալ անհաստատունությունն է: Ներիր..... Մնաս բարով»:

Դադար:

Երկրորդ տղամարդ

Մնաց միայն պատմել ձեզ, թե ինչպես մահացավ Ալբերտը: Սանդրայի ու Մանգրեթի մահից հետո Ալբերտն ապրեց ևս տասը տարի: Նա մահացավ իննսունչորս տարեկանում: Մահացավ այսպես՝ ուշ երեկոյան Ալբերտը նստած էր իր հյուսկեն բազկաթոռին: Մութ էր և Ալբերտը նայում էր աստղերին: Ծերությունից նա լավ չէր տեսնում և աստղալից երկինքը նրա աչքերին երկնագույն լույսով շողշողացող շիլա էր երևում: Ալբերտը նստած նայում էր այդ երկնագույն լույսով շողշողացող շիլային և հանկարծ հիշեց Մարգրեթի վերջին նախադասությունը՝ չէ որ պետք է լինի հաստատուն որևէ բան այս փոփոխական տիեզերքում: Ալբերտն ասաց այս նախադասությունը բարձրաձայն, ասես, հարցն ուղեւով հենց տիեզերքին, որը բացված էր իր առջև երկնագույն շողշողացող շիլայի տեսքով:

-Չէ որ պետք է լինի հաստատուն որևէ բան այս հսկա փոփոխական տիեզերքում.- հարցն ուղղեց տիեզերքին Ալբերտը: Եվ նույն պահին նրա սիրտը կանգ առավ:

Այսպես էլ մահացավ Ալբերտը:

Երկրորդ կին

Եվ ամեն ինչ ավարտվեց:

Առաջին կին

Ցտեսություն....

Կանայք և տղամարդիկ վեր են կենում և դուրս գալիս բեմից:

Վարագույր:

Թարգմանությունը՝ Նունե Վարդանյանի
Խմբագրությունը՝ Հռիփսիմե Շահինյանի

